Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավաասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.
պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:
Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

[illegible]

[illegible]

656.7
Z-94

25 OCT 2013
1 MAR 2010

ԽՍՀՄ Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք ՀՍԽՀ

656.7
Հ-94

# ՀՐԱՀԱՆԳ

## ՈԴԱՅԻՆ ԿԱՊԻ ՅԵՎ ԴԻՏՈՂՈՒԹՅԱՆ ՊՈՍՏԵՐԻ ՀԱՄԱՐ

3J°383

Հ. Հ. Դ. Ի. Վ. ՔԱՂԲԱԺՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1931

24.476

# ՀՐԱՄԱՆ

## Խ. Ս. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

30 հունիսի 1927 թ,

№ 339

Քաղ. Մոսկվա

*I. Գործածության մեջ մտցնել սրան կից հայտարարվող «Օդային կապի և դիտողության պոստերի ծառայության վերաբերյալ հրահանգը»:*

*II. Մարտում բոլոր տեսակ զորքերի սերտ համագործակցությունն ապահովության հետ հնարավոր է միայն զորքերի և օդաչուական կազմի սույն հրահանգի գործնական ցուցումները լրիվ յուրացնելու դեպքում:*

*ԲԳԿԲ պետկազմից պահանջում եմ ուշադիր ուսումնասիրել հայտարարված հրահանգը և օդային կապի ու դիտողության պոստերի անձնական կազմից պատշաճ պատրաստություն ունենալ:*

Ռազմական յեվ Ծովային Գործերի Ժողովրդական Կոմիսար յեվ ԽՍՀՄ Հեղափոխական Ռազմական Խորհրդի Նախագահ՝ ՎՈՐՈՇԻԼՈՎ.

*Գլավլիտ № 6217 (բ) Պատվեր № 1831 Տիրաժ 1000*

*Պետհրատի տպարան, Երևան*

# I. ՓՈՍՏԻ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ

1 Օդային կապի և դիտողության պոստերը կարգվում են՝

1) Ինքնաթիռների օգնությամբ կապ հաստատելու համար.

ա) հրամանատարության և զորամասերի միջև մարտում.

բ) հրամանատարության և զորասյուների միջև երթում.

գ) ցերկրային զորքերի և ավիացիայի (օդ. օգնության) միջև օդանավարանում.

դ) այն բոլոր դեպքերում, երբ հնարավոր չէ կապի սովորական ցերկրային միջոցները վորևէ պատճառով օգտագործել.

2) Թշնամու ինքնաթիռներ հայտաբերել յեվ նրանց մասին տեղեկացնել իրենց զորքերին յեվ օդա-քիմիական պաշտպանության մարմիններին:

Այս հիմնական պարտականությունները կատարելու հետ զուգընթաց օդային կապի և դիտողության պոստը կարող է կատարել նաև պահպանական ծառայության մեջ լրացուցիչ պարտականություններ՝ ինքնաթիռի համար հրապարակ (հարթակ), ընտրելու և նշանակելու մեջ կամ ինքնաթիռին ձողերի օգնությամբ

գրավոր զեկուցումներ հանձնելու կարգում (տես՝ §§ 72—91)։

2. Օդային կապի և դիտողության պոստը կարող է կապվել օդում գտնվող ցանկացած ինքնաթիռի հետ։ Բացի դրանից, պոստի հետ աշխատելու համար կարող են նշանակվել նույնպես և կապի հատուկ ինքնաթիռներ։

3. Պոստն ինքնաթիռի հետ անմիջական կապի յե հաստատում.

ա) պոստի կողմից ինքնաթիռին ազդանշանի քաթանով ազդանշան տալով.

բ) ինքնաթիռի կողմից պոստի վրա տեղեկագրերով դրոշակներ (վիմպել) գցելով.

գ) ինքնաթիռը պոստից տեղեկագրերով ծրարներ ճանկի (կեռի) օգնությամբ բռնելով.

դ) ինքնաթիռը պոստի տեսողության շրջանում իջնելով։

## II. ՊՈՍՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

### Ա. Ընդհանուր դրույթներ

4. Օդային կապի և դիտողության պոստերը հանդիսանում են կապի կազմակերպության և օդային-քիմիական պաշտպանության նորմալ միջոց, ինչպես յերկրային զորքերի, նույնպես և օդային ուժերի բոլոր մարտական դրությունների դեպքում։

5. Օդային կապի և դիտողության պոստերը պահվում են հաստիքային կարգով նրանց համար առանձնացված ցուցակային գույքով կորպուսների, դիվիզիաների, հրաձգային, հրետանական և հեծելազորական կա-



պի զորամասերի կազմում, օդա-քիմիական պաշտպանության հատուկ զորամասերի կազմում, նույնպես և յուրաքանչյուր օդային ուժերի ավիապարկում (սավառնակի պարկ)։

ԾԱՆՈԹ. Ավիո-(սավառնակային) զորամասերին սպասարկելու համար օդային կապի պոստերը ջոկվում են համապատասխան պարկերից ավագ ավիո-պետի կարգադրությամբ։

6. Օդային կապի և դիտողության պոստերը բոլոր դեպքերում յենթարկվում են կապի պետին, իսկ վորտեղ այդպիսին չկա — սպասարկվող զորամասի հրամանատարին։

7. Ավագ ավիո-պետին, նույնպես և տվյալ ՇԸՐջանում օդա-քիմիական պաշտպանության կազմակերպող պետին, համապատասխան զորական հրամանատարին կամ կապի պետի միջոցով, իրավունք է վերապահվում անձամբ կամ նրանց կողմից նշանակված մասնագետների միջոցով, հրահանգել և տեսչություն անել օդային կապի և դիտողության պոստերի ծառայությանը զորական միավորումներում։

8. Սավառնակային հրամանատարության և օդա-քիմիական պաշտպանության պետերի ամեն տեսակ պահանջները և ցուցումները պոստերի նկատմամբ (օրինակ, նրանց անբավարար տեղավորման, քողարկման, դիտողության և տեղեկացման կարգի նկատմամբ և այլն) հանձնվում է պոստերի պետերին կապի համապատասխան պետի կամ հրամանատարի միջոցով, վորին յենթակա յե պոստը։

### Բ. Պոստի կազմը

9. Օդային կապի և դիտողության պոստի հաստիքային կազմն այն զորամասերում, վորոնք հիշատակ-

գրավոր զեկուցումներ հանձնելու գործում (տես՝ §§ 72—91)։

2. Ոդային կապի և դիտողության պոստը կարող է կապվել ոդում գտնված ցանկացած ինքնաթիռի հետ։ Բացի դրանից, պոստի հետ աշխատելու համար կարող են նշանակվել նույնպես և կապի հատուկ ինքնաթիռներ։

3. Պոստն ինքնաթիռի հետ անմիջական կապի յե հասնում.

ա) պոստի կողմից ինքնաթիռին ազդանշանի քաթանով ազդանշան տալով.

բ) ինքնաթիռի կողմից պոստի վրա տեղեկագրերով դրոշակներ (վիմպել) քցելով.

գ) ինքնաթիռը պոստից տեղեկագրերով ծրարներ ճանկի (կեռի) ոգնությամբ բռնելով.

դ) ինքնաթիռը պոստի տեսողության շրջանում իջնելով։

## II. ՊՈՍՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

### Ա. Ընդհանուր դրույթներ

4. Ոդային կապի և դիտողության պոստերը հանդիսանում են կապի կազմակերպության և ոդային-քիմիական պաշտպանության նորմալ միջոց, ինչպես ցամաքային զորքերի, նույնպես և ոդային ուժերի բոլոր մարտական դրությունների դեպքում։

5. Ոդային կապի և դիտողության պոստերը պահվում են հաստիքային կազմով նրանց համար սահմանված ցուցակային զույգով կորպուսների, դիվիզիաների, հրաձգային, հրետանական և հեծելազորական կապի զորամասերի կազմում, ոդա-քիմիական պաշտպանության հատուկ զորամասերի կազմում, նույնպես և յուրաքանչյուր ոդային ուժերի ավիապարկում (սավառնակի պարկ)։

ԾԱՆՈԹ. Ավիո-(սավառնակային) զորամասերին սպասարկելու համար ոդային կապի պոստերը ջոկվում են համապատասխան պարկերից ավիո-պետի կարգադրությամբ։

6. Ոդային կապի և դիտողության պոստերը բոլոր դեպքերում ենթարկվում են կապի պետին, իսկ վորտեղ այդպիսին չկա — սպասարկվող զորամասի հրամանատարին։

7. Ավագ ավիո-պետին, նույնպես և ավիալ շրջանում ոդա-քիմիական պաշտպանության կազմակերպող պետին, համապատասխան զորական հրամանատարին կամ կապի պետի միջոցով, իրավունք է վերապահվում անձամբ կամ նրանց կողմից նշանակված մասնագետների միջոցով, հրահանգել և տեսչություն անել ոդային կապի և դիտողության պոստերի ծառայությանը զորական միավորումներում։

8. Սավառնակային հրամանատարության և ոդա-քիմիական պաշտպանության պետերի ամեն տեսակ պահանջները և ցուցումները պոստերի նկատմամբ (օրինակ, նրանց անբավարար տեղավորման, քողարկման, դիտողության և տեղեկացման կարգի նկատմամբ և այլն) հանձնվում է պոստերի պետերին կապի համապատասխան պետի կամ հրամանատարի միջոցով, վորին ենթակա յե պոստը։

### Բ. Պոստի կազմը

9. Ոդային կապի և դիտողության պոստի հաստիքային կազմն այն զորամասերում, վորոնք հիշատակ-

ված են § 5-ում, կազմված է հինգ մարդուց. պոստի պետից (կրտսեր հրամկազմի անձերից) և չորս կարմիր բանակայիններից — նշանարարներից (դիտողներից), վերջինների կազմից մեկը հանդիսանում է պոստի պետի տեղակալ և մեկ—գումակային։

ԾԱՆՈԹ. Պոստի անձնական կազմը համալրվում է միանգամայն գրագետ և ուժեղ տեսողություն և լսողություն ունեցող անձերից։

### Գ. Պոստի գույքը

10. Օդային կապի և դիտողության յուրաքանչյուր պոստ, զորամասերում սկսած գնդից և բարձր, ունեն հետևյալ ցուցակային գույքը.

ա) ճանաչելու — ցուցական քաթաններ (տես՝ հավելված 6).

բ) ազդանշանի քաթան (տես՝ հավելված 1),

գ) ժամացույց.

դ) կողմնացույց.

ղ) յերկդիտակ.

ե) պոստի դիտողությունների և աշխատանքի մատյաններ (տես՝ հավելված 10 և 11).

ը) գրելու համար դաշտային յերկու գրքույկներ, մատիտներ.

թ) հրահանգ պոստերին ազդանշանի կրճատագրով.

ժ) մեր և թշնամու ինքնաթիռների ուրվանկարների ալբոմ.

ի) քարտեզ.

լ) թվագիր (շիֆրեր) (տես՝ հավելված 14).

խ) լապտեր, ծխափոշի կամ ծխագլան.



ծ) յերկու բահ (թի), կացին.

կ) յերկու ձող 6 մետր յերկարությամբ և մինչև 100 մետր լարան գետնից ինքնաթիռին գրավոր հաղորդագրություններ հանձնելու համար (ցանկալի յե ունենալ ծալովի ձողեր դաշտային հեռախոսի ձողերի տիպի).

հ) յերկանիվ՝ գույքը տեղափոխելու համար.

ԾԱՆՈԹ. Օդա-քիմիական պաշտպանության մարմինների օդային դիտողության յեվ տեղեկացման հատուկ պոստերի գույքը պահվում է առանձին ցուցակով։

### Դ. Պոստի անձնական կազմի պարտականությունները

11. Օդային կապի և դիտողության պոստի գլխին կանգնած է պոստի պետը։ Նա կրում է լրիվ պատասխանատվություն պոստի աշխատանքը անշեղ կատարելու համար և ղեկավարում է իրեն ստորադրյալ մարդկանց իր տեղակալի անմիջական մասնակցությամբ։

Պոստի պետի վրա պարտականություն է ընկնում նույնպես իր մասի կարմիր բանակայիններին ծանոթացնել ինքնաթիռին առաջավոր գծում ազդանշաններ տալու կանոնների հետ (անձնական քաթանների (կտավների), բենգալյան կրակների օգնությամբ և այլն), նույնպես և օդում ինքնաթիռները դիտելու և ճանաչելու կանոնների հետ։

12. Պոստի պետը պետք է հիշե, վոր իր ժամանակին մեր ինքնաթիռների հետ կապն և իր ժամանակին մեր զորքերին թշնամու ինքնաթիռների յերևալու մասին տեղեկացնելն ունի արտակարգ նշանակություն։ Այդ իսկ պատճառով նա պարտավոր է պատ-

բաստ լինել բաց անելու պատը և ուշադիր դիտողություն ունենալ օդում չեղած ինքնաթիռների վրա:

13. Պոստի պետն և նրա տեղակալը պետք է կատարելապես իմանան ինքնաթիռների հետ բանակցելու համար չեղած ազդանշանների բոլոր տեսակները (սխեմաները), նշանաբանները, ինքնաթիռների ուրվանկարները, նրանց ճանաչելու նշանները: Նրանք պետք է կարողանան որոշել քարտեզից, կողմնացույցից և վորոշեն ինքնաթիռների թռիչքի բարձրությունը: Պետք է գիտենան ինքնաթիռներն իջեցնելու կանոններն և այս նպատակի համար ցույց տալ համապատասխան նշաններ—ազդանշաններ, նույնպես և ինքնաթիռին ձողերի օգնությամբ գրավոր զեկուցումներ հանձնելու ձևերը (նմաղները):

ԾԱՆՈԹ. Պոստի պետին պետք է հայտնի լինեն վոչ միայն ինքնաթիռի պոստին կանչելու նշանաբանային ազդանշանները, այլ և ինքնաթիռի հետևակի հետ կապվելու ազդանշանները:

14. Պոստի պետը սկսում կամ վերջացնում է իր պոստի աշխատանքը ինքնաթիռների հետ կապվելու մասին կապի պետի հրամանով, իսկ այնտեղ, վորտեղ վերջինս չկա,—սպասարկվելիք զորամասի հրամատարի հրամանով: Մի քանի դեպքերում, վոր վորոշվում է մարտական պարագայի պայմաններով, նա կարող է հիշյալ գործողությունները կատարել իր նախաձեռնությամբ, իր ժամանակին զեկուցելով հրամատարական կարգով:

Նա կազմակերպում է հակառակորդի ինքնաթիռների անդադրում դիտողություն, չսպասելով այդ առթիվ առանձին ցուցումների:



15. Պոստի պետը, կապի պետից կամ զորամասի հրամատարից ստանալով ցուցում պոստի տեղավորության շրջանի և նրա հետ կապ կազմակերպելու մասին, ընտրում է պոստի տեղավորության կետը (պունկտը), պատրաստում է պատը բաց անելու ճանաչելու և ազդանշանի քաթանն և իր պոստի մարդկանց հետ անընդհատ դիտողություն է կատարում օդում, խիստ պահպանելով անհրաժեշտ քողարկման միջոցները:

16. Պոստի պետը սահմանում է ողը դիտելու կարգ և ինքնաթիռի հետ աշխատելու ժամանակ ղեկավարում է այդ աշխատանքը, ամբողջ ժամանակ գտնվելով պոստում: ինքնաթիռից հանձնված բոլոր զեկուցումներն անմիջապես հաղորդում է շտաբին, օգտագործելով իր մոտ չեղած կապի միջոցները: Նույն ձևով նա անմիջապես տեղեկացնում է (անձամբ կամ իր կողմից նշանակված անձի միջոցով) սպասարկվող զորամասին և բարձր միավորության շտաբին կից պոստին՝ հակառակորդի ինքնաթիռների ամեն անգամ յերևալու մասին:

Նա նույնպես կատարում է պոստի դիտողությունների և աշխատանքի գրանցում առանձին ձևի հատուկ մատյաններում (տես՝ հավելված 10 և 11):

17. Պոստի պետը զեկավարվելու համար ստանում է կապի պետից կամ սպասարկվող զորամասի հրամատարից նշանաբանի ազդանշանները և ազբն ինքնաթիռի հետ աշխատելու համար, նույնպես և այն ազդանշանները, վորոնցով ինքնաթիռը պահանջում է հետևակից նշանակելու իր գծերը:

18. Պոստից բացակայելու դեպքում—իր փոխարեն թողնում է տեղակալին:

19. Պոստի թե հաստիքային և թե ժամանակավոր կազմը լրիվին յենթարկվում է պոստի պետին։

20. Պոստի ամբողջ կազմը խիստ ղեկավարվում է պոստի պետի սահմանած սույն կանոններով և կարգով։

## III. ՊՈՍՏԻ ՏԵՂԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Կապի աշխատանքի, ամենամեծ արդյունավետության, հեշտացման և հուսալիության նպատակներով—ոդային կապի և դիտողության պոստն ըստ հնարավորության տեղավորվում է շտաբին կամ հրամանատարական կազմին կից անմիջական մերձակայության վրա։ Յերթում պոստը գնում է զորամասի այն սյունում, վորտեղ գանվում է ավագ պետը, կամ—համաձայն նրա ցուցումի։

Յերթում հակառակորդի ինքնաթիռների յերևալու մասին իր թիկունքին անընդհատ տեղեկացնելու հնարավորությունը պահպանելու նպատակներով, պոստը հատուկ դիտող է նշանակում այն պունկտում, վորտեղ կա լարային կամ ռադիո-կապ բարձր միավորության հետ. պոստի մնացած կազմը ոդի դիտողությունն է կատարում և հակառակորդի ինքնաթիռների մասին տեղեկացնում է զորամասի իր սյունին։

ԾԱՆՈԹ. Զորամասի կիրճերով կամ անտառի կածանով շարժման դեպքում—պոստի պետը կամ նրա տեղակալն առաջ են գնում առաջավոր պահպանող զորամասն իր ժամանակին աշխատանքի հրապարակ հետախուզելու համար կածանից դուրս գալուց հետո։

22 Իր զորամասի դրությունից անկախ, պոստը միշտ պետք է պատրաստ լինի բացվելու և ինքնա-



թիռի հետ աշխատանքի անցնելու։ Այդ նպատակներով յերթում պոստի պետը կամ նրա նշանակած անձը, տեսողության հասողության սահմաններում անդադար հետախուզություն են կատարում պոստի աշխատանքի համար հարմար հրապարակներ գտնելու։

23. Ազդանշանի հրապարակը պետք է բավարարի հետևյալ պայմաններին.

ա) լինել շուտ գտնելի ինքնաթիռի կողմից, վորին հասնում են տեղավորելով հրապարակը ճանապարհների մոտիկ, գյուղերի ծայրերին կամ նրանց հրապարակներում, վորոնք լավ տեսանելի յեն ինքնաթիռից.

բ) հնարավոր դարձնել ոդից ճիշտ տեսնելու հրապարակի վրա փռված ճանաչելու և ազդանշանի քաթանները, վորը կախումն ունի տեղանքի ֆոնից (խուսափել խայտաբղետ մակերևույթներից), լավ լուսավորվածությունից, մոտիկում բարձր շենքերի և ծառերի բացակայությունից և այլն, վորոնք կարող են հրապարակը ծածկել և նրա վրա ստվեր գցել.

գ) ունենալ ոդային տարածության լավ տեսածիր և հարթ մակերևույթ, վորը թույլ չի տալ ազդանշանները նոր գույն ստանալու.

դ) ապահովել հեշտությամբ գտնելու ինքնաթիռներից գցած զեկուցումներով դրոշակները (մոտիկում ճահիճների, լճերի, ջրատար առուների, բարձր խոտի, թփուտների բացակայությունը և այլն)։

ԾԱՆՈԹ. Ցանկալի չե հրապարակը տեղավորել այն տեղանքում, վոր ինքնաթիռի իջեցնելուն (նստելուն) մատչելի չե դրոշակ (վիմպել) նետելու դեպքում, մոտորի (շարժիչի) կանգ առնելու ժամանակ։

24. Պոստի համապատասխան աշխատանքն ապահովելու համար—պոստը պետք է հաստատուն կապված լինի սպասարկվող շտաբի կամ զորամասի հետ: Այդ տեսակ կապ հաստատելն ընկնում է սպասարկվող զորամասի վրա: Դրա հետևանքով, տեղում տեղավորվելու դեպքում, պոստը կապի պետի կարգադրությամբ հեռախոսով կապվում է շտաբի կամ հրամանատարական պունկտի հետ: Այս վերջիններից 1/2 կիլոմետր հեռանալու կամ յերթում աշխատելու դեպքում—պոստին տրամադրում են ձիավոր կամ հեծանվոր լրատար:

Ազդանշանի հրապարակը 200 մետրից ավելի հեռանալու դեպքում կապի կայարանից (հեռախոսի, հեռագրի կամ ռադիո), վորը կապում է պոստի սպասարկվող զորամասը բարձր միավորության կամ թիկունքի հետ, հակառակորդի ինքնաթիռներին հետևող հերթապահ դիտողը տեղավորվում է պոստից առանձին—կայարանի մոտ, վորը ցույց կտա կապի համապատասխան պետը:

25. Պոստի տեղավորման ժամանակ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նրա՝ հակառակորդի կողմից կատարած վերերկրյա և ոդային դիտողություններից քողարկվելու վրա (քողարկել յերկանիվը, ձիերը, խարույկի հետքերն և այլն).

## IV. ԿԱՊԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ

### Ա, Պոստի աշխատելու կարգը

26. Կապի ծառայության գործում պոստի պարտականությունների մեջ է մտնում.



ա) բաց անել (փռել) ճանաչելու և ազդանշանի քաթանները ինքնաթիռին կանչելու, նրան պատասխանելու համար և բանակցելու ինքնաթիռի հետ.

բ) ընդունել ինքնաթիռից գցած զեկուցումները, դրոշակները և վերջինները հրամանատարության շտաբը հասցնել.

գ) վառել խարույկներ կամ ծխագլաններ կապի ինքնաթիռներին պոստի տեղերը կամ քամու ուղղությունը ցույց տալու իջնելու համար.

դ) փնտրել և նշել կապի ինքնաթիռների համար իջնելու հրապարակներ.

դ) ընդունել իջնող (նստող) կապի ինքնաթիռներին և նրանց ոգնություն ցույց տալ.

ե) հանձնել գետնից ինքնաթիռին գրավոր հաղորդագրություններ (ինքնաթիռը բռնում է սրանք ճանկի ոգնությամբ):

27. Ինքնաթիռի և կապի միջև կապ է հաստատվում կանչելով՝

ա) ինքնաթիռից:

բ) պոստից:

28. Ինքնաթիռից պոստին կանչելն և նրա հետ ապագա աշխատանքը կատարվում է հետևյալ ձևով. ինքնաթիռը ցանկանալով ոդային կապի պոստի հետ կապվել, թռչում է նրա տեղավորության շրջանն և տալիս է գաղտնի նշանաբանի ազդանշան. «Յես կարմիրների ինքնաթիռն եմ: Վորտեղ է պոստը»: Այս ազդանշանին պոստը պատասխանում է ասքով և բաց է անում իր ճանաչելու նշանը և ազդանշանի քաթանը, բաց անելով «սպասեցեք» ազդանշանը (1368), յեթե այդ րոպեյին ինքնաթիռին հանձնելու ոդագիր (ավիո-

գրամմա) կա (յեթե այդպիսին չկա ազդանշանի քաթանը բաց են անում փակ կափույրներով): Այդ նըշանները նկատելով, ինքնաթիռը պատասխանում է «հասկացա» (1 սպիտակ հրթիռ) և, պահանջված բարձրության իջնելով, գցում է դրոշակը կամ սկսում է պտույտ անել շրջանի գծով ազդանշաններն ընդունելու համար (պոստի կողմից ոպագրի հանձնման կարգը և նրանց ինքնաթիռի կողմից ընդունումը ցույց կտրվի ներքևում): Պոստից դրոշակի ընդունելու մասին ազդանշանները ստանալուց կամ հանձնման վերջի մասից հետո—թռչում-հեռանում է:

**Ծանոթություն.** *Ինքնաթիռը պոստի հետ աշխատել է սկսում վոչ այլ կերպ. քան համոզվելով վոր պոստը մերն է, վորի համար սպասում է նշանաբանի տալուն կամ պոստը ճանաչելու ազդանշանին:*

29. Յերկրորդ դեպքում պոստը, ցանկանալով կապ հաստատել թռչող ինքնաթիռի հետ, և համոզվելով, վոր ինքնաթիռը մերն է (ճանաչվում է ուրվանկարից, նշաններից), գրավում է նրա ուշադրությունը, խարույկներ կամ ծխադլաններ վառելով (վերջինների քանակը և տեղավորությունը սահմանվում է առանձին ցուցմունքներով համապատասխան հրամաններում կամ հրահանգներում), վորին ինքնաթիռը, յեթե միայն նա այդ առթիվ չի ստացել առանձին ցուցմունքներ, պատասխանում է նշանաբանի տալով: Հետագայում պոստի և ինքնաթիռի աշխատանքն ընթանում է ինչպես ցույց է տրված § 38-ում և ցածում:

30. Պոստը հակառակորդին մոտիկ լինելու և վերջինիս կողմից խարույկի կամ ծխի հոսանքը հայտա-



բերելու վտանգավորության դեպքում—պոստը կանչում է ինքնաթիռին, բաց անելով նշանաբանի ազդանշանն և ազդանշանի քաթանը՝ ընդ վորում լավ տեսնելու և ինքնաթիռից ավելի արագ հայտաբերելու համար անհրաժեշտ է այդ քաթանը ձեռքին քաշել մի քանի անգամ 10—15 քայլ տարածության վրա: Սակայն, ինքնաթիռին այդ յեղանակով կանչելուն պետք է դիմել միայն այն լրիվ հավատով, վոր ինքնաթիռը մերն է:

Ինքնաթիռը նշանաբանի տալով պատասխանելու դեպքում պոստն իր նշանաբանի ազդանշանը փոխարինում է ճանաչման նշանով:

**Ծանոթություն.** *Ինքնաթիռի ում պատկանելության հատկանիշներ հանդիսանում են. նշանները ֆյուզելյաժի և թևերի վրա (տես՝ հավելված 16), ուրվանկար, նշանաբանի հրթիռ:*

31. Ճանաչելու քաթանները պոստը բաց է անում միայն ինքնաթիռի հետ բանակցելու սկզբին և, վերջինիս «հասկացա» ազդանշանից հետո (1 սպիտակ հրթիռ)—հավաքում է: Ճանաչելու քաթանները թողնել առանց հավաքելու արգելվում է:

**Ծանոթություն** *Ինքնաթիռի հետևակից առաջավոր գծի, հրամանատարական կետերի և շտաբների տեղերը ցույց տալու հրահանգի դեպքում—պոստը բաց է անում իր ճանաչու նշանն և ազդանշանի քաթանը: Ինքնաթիռից* **«հասկացա»** *ազդանշանից հետո (մեկ սպիտակ հրթիռ) քաթանները հավաքում են:*

32. Ճանաչելու քաթանները բաց են արվում (տես՝ գծանկ. 1).

ա) հետևակում—ձախից (դեմքով դեպի հակառակորդը կանգնելով) ազդանշանի քաթանից 10 քայլի վրա:

բ) հեծելազորում—ազդանշանի քաթանից 10 քայլ առաջ.

գ) հրետանում - ազդանշանի քաթանից 10 քայլ աջ։




Գծ. 1

33. Պոստը սպասարկվող զորամասի համարը ցույց է տալիս ինքնաթիռի գրավոր պահանջի համաձայն միայն։

34. Ինքնաթիռից ամեն մի ընդունած զեկուցումը (դրոշակը) պոստը նշում է «հասկացա» ազդանշանով, հակառակ դեպքում—«կրկնեցեք» ազդանշանով։ Ինքնաթիռից ընդունած զեկուցումը, անկախ նրա բովանդակությունը հեռախոսով սպասարկվող զորամասի շտաբին անմիջապես հայտնելուց, այնուհետ են ուղարկում հատուկ սուրհանդակի միջոցով նաև բնագիրը։ Ինքնաթիռից զեկուցումն ընդունելու և այն շտաբին ուղարկելու ժամանակը գրի յեն անցնում մատյանում։

35. Ինքնաթիռի օգնությամբ հանձնման համար պոստը մտած բոլոր հրամանները կամ զեկուցումները պետք է մտնեն արդեն հանձնման համար պատրաստի դրությամբ, այսինքն պետք է ծածկագրված լինեն



ըստ զորական կամ դաշտնի կրճատագրի։ Վերջին խնդիրն ամբողջովին մտնում է համապատասխան շտաբի (ուղարկողի) պարտականությունների մեջ։

Հասցեները ծածկագրվում են միայն ըստ զորական կրճատագրի։ Անմիջապես ինքնաթիռի համար նշանակված հաղորդագրությունները հանձնում են մշտական ազդանշաններով (տես՝ հավելված 3)։ Ազդագրերը ստորագրում են կարճ, օրինակ՝ 2 կորպուս, 81 դիվիզիա, 242 գունդ և այլն։

36. Ինքնաթիռին հանձնելու համար պոստը մըտած յուրաքանչյուր ուղագիր պոստի պետը գրի յե առնում հատուկ մատյանում առանձին ազդանշանների ձևով։ Ազդանշանները գրի յեն առնվում հաջորդական կարգով մատյանի բլանկի քառակուսու մեջ—սկզբում վերին, և ապա հետևյալ ցածի տողերի վրա (տես՝ հավելվածներ 4 և 5)։

Հասցեն գրվում է յերկու անգամ, ազդանշանի ձևով բլանկի համապատասխան քառակուսում և ծածկագիրը բացված նախադասության ձևով հատուկ սյունակում։

Հանձնումը կատարվում է նույն հաջորդականությամբ։

**Ծանոթություն.** Յեթե ուղագիրը պոստ է մտնում առանց կրճատագրի համեմատ ծածկագրելու, այդ դեպքում պոստի պետը սկզբից գրի յե առնում նրա բովանդակությունը սովորական կարգով՝ - ապա ծածկագրում է այն ըստ զորական կրճատագրի թվական ազդանշանների ձևով.

37. Պոստից ինքնաթիռին նշաններ հանձնելու ժամանակ—պոստի պետը դիտում է ինքնաթիռի թըռիչքը և միևնույն ժամանակ հետևում է ազդանշանի քաթանի ճյուղերի ուղիղ և արագ բաց անելուն (ուշք է դարձնում այն բանի վրա, վոր պոստի մարդիկ ազ-

դանշանի քաթանի առաջը չկտրեն կամ իրենց սավիլով չծածկեն նրան և դրանով չխանգարեն դիտողությունն ինքնաթիռից)։ Հրամանները տրվում են կարճ և կտրուկ. «մեկ—յեռեֆ—ուք» (նշանակում է՝ «բաց արա 138»), «փակիր» (փակում են բոլոր ճյուղերը), «բաց արա բոլորը», «հեռացրու ազդանշանը» և այլն։

38. Պոստի բաց արած յուրաքանչյուր ազդանշան չեն հավաքում մինչև 8—10 վայրկյանի ընթացքում։ Դրանից հետո պոստի պետը կարգադրություն է անում փակել ազդանշանի քաթանի ճյուղերը, և ապա 5 վայրկյան անց- հրաման է տալիս բաց անելու հետևյալ ազդանշանը.

39. Ինքնաթիռի կողմից ընդունած ամեն մի ազդանշանի համար հաստատում չի պահանջվում։ Սակայն այն դեպքերում, յերբ ինքնաթիռի դիտողը չի կարողանում վորոշված ժամանակում տարբերել և գրի առնել պոստի ազդանշանները, նա ազդանշանում է վերջինին. «չհասկացա» (ինքնաթիռը շրջանը խիստ սուր կերպով փոխում է հակառակ կողմը), վորից հետո, ինքնաթիռն իր նորմալ շրջանը վերադառնալուց հետո, պոստը կրկնում է վերջին յերկու ազդանշանները և շարունակում է հանձնել մնացած հաղորդագրությունը։

40. Ազդանշանը. սխալ ցույց տալու դեպքում պոստն ազդանշանում է ինքնաթիռին. «սխալվեցի», ապա կրկնում է վերջին ճիշտ հանձնված ազդանշանը և դրանից հետո միայն շարունակում է մնացած հաղորդագրությունը։

41. Հաղորդագրությունը վերջացնելուց հետո պոստի պետը հրամայում է ցույց տալ «վերջ» (12345



6789) ազդանշանը և սպասում է մինչև վոր ինքնաթիռը կգցի ընդունած ռդագրի պատճենի դրոշակը. հավաստիանալով, վոր պոստի մարդիկ ընդունել են դրոշակը, հրամայում է ցույց տալ «սպասեցեք» ազդանշանը, վորպիսին և պահում է բաց մինչև ինքնաթիռի ընդունած ռդագրի պատճենը մատյանում իրեն գրանցածի հետ համեմատելու վերջը։

42. Պոստի պետը ինքնաթիռի նետած պատճենը մատյանում գրանցածի հետ համեմատելով, նայած հետևանքին, հետագայում վարվում է այսպես.

ա) ռդագիրն ուղիղ ընդունած դեպքում—ազդանշում է «այո՛», վորից հետո ինքնաթիռը հեռանում է ըստ նշանակման։

բ) ազդանշանները անճիշտ կամ բաց թողումով ընդունած դեպքում, վորոնք աղճատում են ռդագրի միտքը,—ազդանշում է ինքնաթիռին. «ուղղեցեք ռդագիրը», վորից հետո ցույց է տալիս համապատասխան ուղղումները. յեթե շատ սխալներ կան—ինքնաթիռից պահանջում է յերկրորդ անգամ ընդունել ռդագիրն ամբողջությամբ։

43. Ուղղումներն ազդանշում են ինքնաթիռին հետևյալ կերպով.

ա) Սխալ ընդունած ազդանշանի ուղղում։ Սկզբում ցույց է տրվում քառակուսին, վորում նկատված է սխալը, ապա—ազդանշանը, ըստ վորի պետք է սխալն ուղղել.

բ) Բաց թողած ազդանշանի ցուցում։ Ցույց է տրվում ազդանշանի այն քառակուսին, վորը ձախից կից է բաց թողածին, ապա հանձնում են «0» (26789). վոր նշանակում է—բաց թողած ազդանշանը։

Սխալի քառակուսու (կամ այն քառակուսու, որը կից է բաց թողած ազդանշանին) ցույց տալը կատարվում է ոդագրի ընդհանուր հորիզոնական և ուղղաձիգ առքերը ցույց տալով, վորոնց հատման տեղում այդ քառակուսին գտնվում է։

Հորիզոնական առքի համարն ուղղաձիգ առքից միշտ շուտ է տրվում (տես՝ հավելված 5)։

44. Պոստի պետն ինքնաթիռի կողմից ոդագրի ընդունման մասին անմիջապես զեկուցում է այն պետին, վորից այն ստացվել է։ Անկախ դրանից, ամեն որվա վերջին մատյաններն և որվա ընթացքում ստացված ամբողջ նյութը, պոստի պետը ներկայացնում է ստորադասվող զորամասի կապի պետին։

45. Պոստի հաջող աշխատանքի համար—վերջինս իր ժամանակին պետք է ստանա անհրաժեշտ տեղեկություններ մեր ինքնաթիռների թռիչքի ժամանակի մասին։

46. Մեր ինքնաթիռի հետ բանակցելու ժամանակ ոդային հակառակորդի յերեվալու դեպքում—պոստն ընդհատում է հաղորդագրությունը և հավաքում է ազդանշանի քաթանը, իսկ նրա փոխարեն հակառակորդի ուղղությամբ բաց է անում (մեկնում է) նետը, վորը կազմված է ճանաչելու քաթաններից (տես՝ հավելված 7), և վորն իսկույն (8—10 վայրկյան հետո) նորից ծալում է (հավաքում է)։

**Ծանոթություն.** Հաղորդագրությունը շարունակելու անհրաժեշտության դեպքում, չնայած հակառակորդի ներկայությանը, ազդանշանի քաթանը չի հավաքվում, այլ միայն լրացվում է սլաքով։

Պոստը պահում է սլաքն ամբողջ ժամանակ մեկ-



նած, քանի դեռ ոդային հակառակորդը յերեվում է անմիջական մոտիկության վրա, նրա համաձայն փոխելով սլաքի ուղղությունը։

Ոդային հակառակորդի ներկայությամբ ոդագրի հաղորդագրությունը կարող է կատարվել միայն այդ բանի ծայրահեղ անհրաժեշտության դեպքում, վորի մասին ոդագրի վրա պետք է արվի ուղարկողի համապատասխան նշանը։

47. Աշխատանքի ժամանակ պոստին նրա կազմից դուրս կողմնակի անձանց չի թույլատրվում մոտենալ (բացառությամբ զորական կամ ոդագնացության զորամասերի համապատասխան պետերից)։ Նույնպես այդ ժամանակ պոստում արգելվում են ամեն տեսակ մասնավոր խոսակցությունները։

48. Ոդային կապի պոստերը ստուգում են զորամասի հրամանատարը, կապի պետը կամ նրանց հանձնարարությամբ այլ անձինք, պետի դիտողությունները գրանցելու համար մատյանում նշանակելով պոստի ստուգման մասին։ Միևնույն ժամանակ ստուգում են և պոստի պետի ժամացույցը։

## Բ. Ոդաչուական կազմի պարտականությունները յեվ ինք-նաթիռի աշխատանքը

49. Ամբողջ ոդաչուական կազմը պարտավոր է հաստատուն իմանալ ինքնաթիռի մշտական ազդանշանները, ազդանշան տալու կանոնները գետնից ինքնաթիռին և ինքնաթիռից գետնին և թռիչքում ունենալ գծագրացի տախտակ նրա վրա գրված պայմանական ազդանշանների նշումները կամ թվագրերը (շիֆրեր) (տես՝ հավելված 14)։

**Ծանոթություն**․ *Յուրաքանչյուր հետախուզող ինքնաթիռի անձնակազմը, որ պատրաստվում է մարտական խնդիր կատարելու, անկախ այդ խնդրի բնույթից, պարտական է հաշվի առնել նաև կապի վերաբերյալ համընթաց աշխատանքի հնարավորությունը։*

50. Դուրս թռչելուց առաջ օդաչու—դիտողը (օդաչուն) պետք է տվյալ ժամանակի համար ստանա պայմանական նշանաբանի ազդանշանը պոստին կանչելու համար. «Ես կարմիրների ինքնաթիռն եմ։ Որտեղ է պոստը» - և զորամասերի կապի պոստերի նշանաբանները։

51. Պոստին ազդանշան տալու դեպքում (հրթիռ, դրոշակ, կերպարան) ինքնաթիռն սպասում է պոստից ստացած ազդանշանի հաստատմանը (պոստից ազդանշան «այո՛»)։

52. Պոստից ազդանշաններ տալու դեպքում օդաչու—դիտողը գրի չի առնում գետնին բաց արած ազդանշաններն օդագրի հատուկ բլանկում § 36-ում ցույց տված կարգով։ Այս դեպքում գրի չի առնում ազդանշանների թվական նշանակությունը, առանց ծածկագիրը բանալու։ Ինքնաթիռի վրա անպայման բաց են անում—օդագրի հասցե ծածկագիրը, նույնպես և այն ազդանշանները, որոնք հասցեագրված են անմիջապես ինքնաթիռին (տես՝ հավելված 3 և 5)։

53. Հաղորդագրությունը վերջացնելուց հետո (ազդանշան՝ «վերջ») օդաչու—դիտողը պոստ է գցում ընդունած օդագրի պատճենն ազդանշանների գրի առած թվական նշանակությամբ, նախապես բանալով հասցե ծածկագիրը։

54. Ընդունած օդագրի պատճենի դրոշակը նետելով, ինքնաթիռը չի հեռանում պոստից այնքան ժամանակ, մինչև պարզ չի տեսնում պոստից հաղորդագրություն, որ գցած դրոշակը գտնված է և որ օդագիրն ընդունված է ճիշտ (ազդանշան պոստից «այո»), հակառակ դեպքում պետք է կրկնել դրոշակը կամ անցնել օդագրի ուղղման, ինչպես ցույց է տրված § 42-ում։



55. Տեսողության նորմալ պայմանների դեպքում թռիչքի ամենալավ բարձրությունն օդագիր ընդունելու համար հանդիսանում է 700-800 մետրը, ամենաշատը—1200 մետր։ Օդաչուն շրջագծով ինքնաթիռը պետք է տանի այն ձևով, որպեսզի գետնին բաց արած ազդանշանները միշտ գտնվեն դիտողի տեսողության դաշտում։

### Դ. Նշանաբանի (парольные) ազդանշաններ

56. Նշանաբանի ազդանշանը ծառայում է ինչպես պոստին, նույնպես և ինքնաթիռի համար, որպես միջոց համոզվելու, որ ինքնաթիռը (պոստը) իրենցն է։

57. Նշանաբանի ազդանշանն ինքնաթիռը հանձնում է հրթիռների կամ պիլոտաժային կերպարանների միջոցով։ Պոստի համար նույնանման միջոցներ կլինեն. խարույկների, ծխագլանների, քաթանների համակցությունը։

58. Նշանաբանները նշանակվում են նախապես, գաղտնի կերպով և հաղորդվում են պոստերի պետերին և օդաչուական կազմին։ Նշանաբանները կարող են նշանակվել ամեն օր կամ որոշ ժամանակաշրջանի համար։

59. Ասպատակում հեծելազորի հետ կապվելու համար սահմանվում են առանձին նշանաբանի ազդանշաններ։

## Դ. Ճյուղեր (հավելվածներ) ունեցող ազդանշանի քաթանից օգտվելու կանոններ

60. Բացի մշտական սպիտակ „T" տառից, որը կարված է մուգ-կապույտ ֆոնի վրա, ազդանշանի քաթանն ունի 9 սպիտակ բացվող և փակվող ճյուղեր. ճյուղերից յուրաքանչյուրին հատկացված է իրենց թվանշանային նշանակումը — 1-ից մինչև 9 (տես՝ հավելված 1)։

61. Միաժամանակ բաց անելով մեկ-մեկ, յերկ-յերկու, յերեք-յերեք և այլն ճյուղեր, կարելի է հաղորդել 511 տարբեր համակցություններ (комбинации), որոնցից յուրաքանչյուրը կազմված է մի շարք աճող թվանշաններից։ Յուրաքանչյուր համակցությանը հատկացված է պայմանական նշանակություն (ազդանշան)։

62. Այն ազդանշանները, որոնք կազմված են մեկ թվանշանից (բաց է արված 1 ճյուղ), կիրառվում են բացառապես թվանշան (թվեր) հաղորդելու համար և հանդիսանում են մշտական։ Մշտական ազդանշաններ են հանդիսանում նաև բոլոր բազմանիշ (որոնք կազմված են 3 ավելի թվանշանից) ազդանշանները, որոնք յենթակա չեն ծածկագրելու, և որոնք բերված են առանձին աղյուսակով (տես՝ հավելված 3)։

63. Այն ազդանշանները, որոնք կազմված են մի շարք աճող թվանշաններից (օրինակ՝ 123, 13478



և այլն), հաղորդվում են մի նվագ (մեկ ազդանշանով)։ Այն ազդանշանները, որոնք կազմված են մի շարք նվազող թվանշաններից կամ թվանշանների խառը խմբերից (օրինակ՝ 987, 14389 և այլն), հաղորդվում են բաժան-բաժան (տես՝ օրինակը 2-րդ գծանկարում)։




Գծ. 2

64. Զորական կրճատագրի պայմանական նշանակումները, նույնպես և առանձին տառերը հաղորդելու համար, կիրառվում են յերկանիշ կամ յեռանիշ ազդանշաններ (համակցություն յերկու կամ յերեք թվանշանների)։ Մեկի և մյուսների միջև տարբերություն է դրվում նրանով, որ տառերը հաղորդելու սկզբին և վերջին բաց է արվում «89» մշտական պայմանական ազդանշանը, որ նշանակում է «տառերով հաղորդագրություն»։ Այդ ազդանշանի («89») բացակայության դեպքում, բոլոր յերկանիշ և յեռանիշ ազդանշանները (բացի «289»—«ծածկագիր» ազդանշանից) վերաբերում են բացառապես զորական կրճատագրի նշանակումներին (տես՝ հավելված 2)։

65. Հասցեյի (որի ծածկագիրը բաց է արվում միշտ ինքնաթիռի վրա) հաղորդելու սկզբին և վերջին բաց են անում «հասցե» (6789) ազդանշանը։

66. Ծածկագրած ոդագրի հաղորդելու սկզբին և

վերջին, վորպեսին կազմված է մի շարք թվանշաններից բաց են անում «ծածկագիր» (289). յուրաքանչյուր թվախումբ բաժանվում է մյուսից բաժանման նշանով (տես՝ գծանկ. 2)։

67. Բաժանման նշանը բաց են անում նույնպես առանձին հրամանների միջև։

68. Ըստ զորական կրճատագրի ողագիրներ կազմելու դեպքում հարկավոր է առանձին ուշադրություն դարձնել այն բանի վրա, վոր ողագրի միտքը տարբեր մեկնություններ չստանա։ Հարկավոր ազդանշանը գտնելու դժվարությունների դեպքում, անհրաժեշտ է դնել միջանկյալ բառեր, տառ առ տառ հաղորդելով։

## V. ԴԻՏՈՂՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

69. Դիտողության և տեղեկացման ծառայության տեսակետից պոստի վրա դրվում է.

ա) վարել անընդհատ դիտողություն հակառակորդի ոդային տորմիղի նավերը հայտաբերելու և ճանաչելու համար (տես՝ հավելված 15 և 16).

բ) կազմել և հաղորդել՝

1. կարճ պայմանական զեկուցումներ դեպի մեր թիկունքն ուղղված (մեկնած) հակառակորդի ինքնաթիռների մասին (տես՝ հավելված 8).

2. պարբերական զեկուցումներ—որ ու գիշերվա ընթացքում կատարված դիտողության ամփոփումներ, ինչպես ցույց է տրված հավելված 9-ում։ (Պարբերական ամփոփումների հաղորդումը սահմանվում է հրամանատարության հատուկ կարգադրությամբ).



գ) ազդանշան տալ մեր ինքնաթիռներին հակառակորդի ինքնաթիռի բարձրության, թռիչքի ուղղության և տեսակի (տիպի) մասին, համաձայն հավելված 7-ի ցուցմունքների։

դ) վարել պոստի դիտողությունների գրանցման մատյանը (տես՝ հավելված 10)

ԾԱՆՈԹ. —Կարճ պայմանական զեկուցումներում ցույց է տրվում.

ա) ինքնաթիռի թռչելու ճիշտ ժամանակը.

բ) այն կետը (պունկտ), վորի վերևում նկատվել է ինքնաթիռը.

գ) վորտեղից և ուր թռավ ինքնաթիռը (ուղղությունը ցույց է տրվում աշխարհի կողմերով).

դ) ինքնաթիռների քանակը.

ե) ինքնաթիռների տեսակը (հետախույզ, կործանիչ, ռմբակոծող), նրա արտաքին տեսքը կամ սխեմը (մոնոպլան, բիպլան՝ յերկմատորանի, Բրեգե 19Ա. Ֆոկկեր CIV և այլն).

զ) թռիչքի բարձրությունը (1000 մետրով).

է) ում պատկանելը (թշնամուն, անհայտ)։

70. Կարճ պայմանական զեկուցումները պետք է կազմվեն և հանձնվեն իր զորամասի շտաբին և բարձր միավորության շտաբին կից պոստին հակառակորդի ինքնաթիռներ հայտաբերելուց անմիջապես հետո։ Պարբերական զեկուցումները (ամփոփումները) տրվում են բարձր միավորության շտաբին կից պոստին միայն նախապես սահմանված ժամկետներին։

71. Դիվիզիաների և կորպուսների շտաբներին կից պոստերի վրա, բացի § 69-ում ցույց տվածից, նույնպես դրվում է.

ա) ցածր միավորությունների պոստերից ոդային հակառակորդի մասին զեկուցումներն ընդունելը և տե-

ղեկավարելն այն զորամասերին, շտաբներին, ավիամասերին, նույնպես և այն հիմնարկություններին և անձանց, որոնց անհրաժեշտ են հրամատարության հատուկ ցուցումներ.

բ) վարել արտաժամկետային ղեկուցումների գրանցման մատյանն և ոդային հակառակորդի մասին կատարած ծանուցումները (տես՝ հավելված 11)։

# VI. ՊՈՍՏԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԽՆԴԻՐՆԵՐԸ

72. Ի զարգացումն սույն հրահանգի § 1-ի, ոդային կապի պոստի վրա կարող են դրվել հետևյալ խնդիրները.

ա) պահպանության ծառայությունը.

բ) ինքնաթիռների համար իջնելու հրապարակի ընտրությունն ու նշումը.

գ) ինքնաթիռին գրավոր կերպով հաղորդագրություններ հանձնելը (ձողերով)։

## Ա. Պահպանության ծառայությունը

73. Պոստի պետն անմիջապես զեկուցում է շտաբին կամ մոտիկ գտնված զորամասին (ավիամասին).

ա) բոլոր ցածրացող, նույնպես և պոստի շրջանում իջնող ինքնաթիռների մասին—մեր և հակառակորդի (բացառյալ մեր այն ինքնաթիռներից, որոնք իջնում են այրոդրոմում).

բ) հակառակորդի ինքնաթիռներից նետած դրոշակների և բեռների մասին.

գ) հակառակորդի ինքնաթիռներից իջած ճանապարհորդների մասին.

դ) գետնից հակառակորդի ինքնաթիռին կամ



ինքնաթիռից գետնին տված հայտաբերած կամ չենթադրելիք ազդանշանի մասին։

74. Մեր ինքնաթիռի պոստին անմիջական մոտիկության վրա իջնելու դեպքում—պոստի պետը, այդ մասին անմիջապես շտաբին կամ մերձակա զորամասին տեղեկացնելուց հետո, իրենց ուժի համեմատ միջոցներ է ձեռք առնում իջած ինքնաթիռին օգնություն հասցնելու։

75. Հակառակորդի ինքնաթիռը պոստին անմիջական մոտիկության վրա իջնելու դեպքում—պոստի պետը, կատարելով § 73-ի կ. «ա»-ի պահանջքի իրեն համար բոլոր հնարավոր միջոցները ձեռք է առնում ինքնաթիռը գրավելու և օդաչուներին գերելու։

76. Հակառակորդի ինքնաթիռից նետած դրոշակի կամ բեռի վրա պոստի պետը գաղտնի հսկողություն է նշանակում, միջոցներ ձեռք առնելով բռնատրելու այն անձին, որը վերցրել է այդ դրոշակը (բեռը)։

## Բ. Ինքնաթիռի համար իջնելու հրապարակի ընտրությունն ու նշումը

77. Ինքնաթիռների իջնելու համար պետքական բոլոր հայտաբերված հրապարակների մասին, պոստի պետը զեկուցում է վերադասության կարգով։

Իջման հրապարակը պետք է երկարությամբ և լայնությամբ 400 մետրից պակաս չլինի. նրա մակերևույթը պետք է լինի հարթ՝ գետինը (հողը) պինդ. Հրապարակը պետք է ունենա ազատ մուտքեր (հրապարակը շրջապատող շերտում մինչև 300 քայլ լայնությամբ չպետք է լինեն բարձր ծառեր, հեռագրա-

կան սյուներ, բարձր շենքեր, խողովակներ և այլն). Հրապարակում բարձր թանձր խոտի, ցանքերի թփերի, առուների, մեծ քարերի, հողակույտերի, խոնավ գետնի, փխրուն ավազի, առանձին ծառերի, կոճղերի և այլոց առկայությունը—վերջինիս դարձնում է ինքնաթիռների իջնելու համար անպետք: Ցանկալի պայման է հանդիսանում իջման հրապարակի մոտիկում քողարկող պատսպարանների և թաքստոցների (շենքերի, թանձր ճյուղավոր ծառերի և այլոց)առկայությունն իջնող ինքնաթիռները քողարկելու համար:

78. Իջման հրապարակների մասին տեղեկությունները, որոնք պոստերի պետերը հաղորդում են ստացվող գործամասի կապի պետին, վերջինս հաղորդում է օդագնացության հրամանատարությանը, որը միջոցներ է ձեռք առնում նրանք ստուգելու:

79. Ըստ զորամասի հրամանատարի հրամանի, որը պահանջում է ինքնաթիռին իջնելու, և իջման հրապարակի առկայության դեպքում—պոստի պետը բաց է անում (փռում է) նշանաբանի ազդանշանն և «իջեք» ազդանշանը, որին ինքնաթիռը պետք է պատասխանի «հասկացա» (մեկ սպիտակ հրթիռ): Դրանից հետո պոստի պետը բաց է անում «սպասեցեք» ազդանշանը և անմիջապես պատրաստում է իջման հրապարակն ինքնաթիռն ընդունելու համար (տես՝ § 82): Բոլոր նշանները բաց անելուց հետո, նա վառում է խարույկներն և «սպասեցեք» ազդանշանը փոխում է նորից «իջեք» ազդանշանով, որը նշանակում է թե ինքնաթիռը կարող է իջնել (տես՝ հավելված 12):

ԾԱՆՈԹ.—Հաշվի առնելով ինքնաթիռի իջնելու դժվարությունները և ռիսկը քիչ սարքավորված դաշտային հրապարակներում, զորական հրամանատարությունը պետք է կալի այս միջոցին դիմել օպերատիվ անհրաժեշտության ծայրահեղ դեպքերում միայն:

80. Օդագնացքին անհայտ հրապարակում ինքնաթիռն իջեցնելու հետ կապված դժվարության և վըտանգների հետևանքով, պոստի պետի վրա պատասխանատվություն է ընկնում ընդունելու իրենից կախված բոլոր միջոցները վորպեսզի իջման հրապարակը.

1. բավարարի իր բնական հատկությունների կողմից սույն հրահանգի § 77-ի պահանջները:

2. պատշաճ ձևով պատրաստված և սարքավորված լինի իջման նշաններով և ազդանշաններով:

81. Իջման հրապարակի ընտրության դեպքում պոստի պետը պետք է՝

ա) անձամբ չափի նրա մեծությունը և գնահատի ինքնաթիռի նրան մոտենալու հարմարությունները.

բ) իր ստորադրյալների հետ միասին մանրակրկիտ ուսումնասիրել նրա մակերևույթն և գետինը (չկան արդյոք առուներ, փոսեր, ճահճացած տեղեր, քարեր, հողակույտեր, կոճղեր և այլ խոչընդոտներ, որոնք կարող են ինքնաթիռը խորտակման (կործանման) ենթարկել, և եթե կան, հնարավոր է արդյոք նրանց հեռացնել (չեզոքացնել) պոստի միջոցներով):

82. Ինքնաթիռի իջման հրապարակը նշանակելու համար պոստի պետը սարքավորում է այն հետևյալ ձևով (տես՝ հավելված 12).

ա) հրապարակի սահմանները նշանակում է սպիտակ անկյուններով (ճանաչելու քաթաններից):

բ) այն խոչընդոտները, որոնք կարող է չեն հեռացվել, և միևնույն ժամանակ չեն խանգարում իջնե-

լուն (փոս, բլրակ) նշանակում են յերկու կողմից սպիտակ անկյուններով, վորոնք օդագնացի համար ծառայում են վորպես նախազգուշացում վտանգավոր տեղի առկայության մասին։

գ) իջման հրապարակի կենտրոնում բաց է արվում իջնելու «T»-ն խոտորնակի կողմով քամու դեմ. այդ ազդանշանն ինքնաթիռին ցույց է տալիս իջման ուղղությունը,

դ) ինքնաթիռին քամու ուղղությունն և իջման հրապարակի սահմաններն ավելի ճիշտ ցույց տալու համար, անհրաժեշտ է ելի 3 խարույկներ վառել (ծխագլաններ). յերկու խարույկ հրապարակի առաջին կողմում (քամու ուղղության հակադիր)—վորոնք ծառայում են վորպես դռներ և ցույց են տալիս, թե վորտեղ ինքնաթիռը պետք է իջնելիս անիվները կպցնի գետնին, և յերրորդ խարույկը հակադիր կողմում—վորը ցույց է տալիս հրապարակի վերջը։

ԾԱՆՈԹ.—1. Ինքնաթիռների իջնելն և վեր թռչելը կատարվում է խիստ կերպով քամուն ընդդեմ, ուստի և վերջինիս ուղղությունն անհրաժեշտ է հաճախ ստուգել. քամու ուղղության փոփոխության դեպքում—համապատասխան կերպով բաց են արվում նորից իջման «T»-ն և խարույկները։

2. Խարույկների ծուխն օդից լավ տեսնվում է այն ժամանակ, յերբ ինքնաթիռն իջնելու համար ուղիղ գիծ է ընդունում, րոպեներ են լինում, յերբ իջման «T»-ն չի յերևում։

83. Ինքնաթիռն իջնելու դիտավորություն ունենալու պոստի կողմից նրա դեպքում տրվող ազդանշանի, նույնպես և իջման հրապարակում խարույկների վառելու բոլոր կանոնները—ցույց են տրված § 79-ում։



84. Ինքնաթիռն իջնելուց հետո պոստի պետն և 1—2 նշանարարները մոտ են վազում ինքնաթիռին և, օդաչուի ցուցումով, ցույց են տալիս նրան անհրաժեշտ օգնություն ինչպես ինքնաթիռը դուրս հանելու, նույնպես և քարշակման դեպքում։

ԾԱՆՈԹ.—Ղեկավարման (руление) դեպքում պետք է ինքնաթիռը բռնել ցածի թևերի տակի աղեղնակից (կամ ցածի թևերի նեցուկից և առաջին կողմից (յեզրերից) յեթե աղեղնակ չկա) և պոչի առաջին կողմից (յեզրից)։

85. Ինքնաթիռի վեր թռչելու դեպքում պոստի պետը ղեկավարվում է հրապարակ նշանակելու նկատամամբ և այլ միջոցներ ձեռք առնելու օգնելու ինքնաթիռին օդագնացի ցուցումներով։

86. Ինքնաթիռի թռչելու դեպքում պոստի պետը հրամայում է հավաքել հրապարակում դրված բոլոր նշանները, միայն այն բանից հետո, յերբ համոզվում է թե ինքնաթիռն ընդունել է ընթացք և թռչում է իր ցանկացած ուղղությամբ։

### Գ. Պոստից ինքնաթիռին գրավոր հաղորդագրություններ հանձնելը

(ձողերով)

87. Ինքնաթիռը համապատասխան կերպով սարքավորելու պայմանով, առանձին դեպքերում, ինքնաթիռը կարող է գետնից ընդունել գրավոր հաղորդագրություններ, առանց վայր իջնելու։ Դրա համար գրավոր հաղորդագրությունը կախում են ձողի վրա ամրացրած թոկից, և ինքնաթիռը թռչելով ձողերի վրայով ցածից (15—20 մետր), վերցնում է այն առանձին ճանկով (կատվիկով) վորը կախ է գցած պարանով դի-

տողի (օգնականի) կարինից (առանձնասենյակից)։

Այդ ճանապարհով ինքնաթիռին հաղորդագրություններ հանձնելու խնդիրն ընկնում է օդային կապի և դիտողության պոստի վրա։

88. Ինքնաթիռների ճանկի միջոցով հաղորդագրություններ պոստերից ընդունելը կատարվում է միայն ոպերատիվ անհրաժեշտության հատուկ դեպքերում և այդ հարցը զորամասերը պետք է օդագնացության հրամանատարության հետ համաձայնեցնեն, որտեղ այդ նպատակով կան հատուկ սարքավորված ինքնաթիռներ։

89. Ձողերով ինքնաթիռին հաղորդագրություններ հանձնելու համար պոստի պետը բոլորովին բաց տեղում ընտրում է հրապարակ, որի վրա անկում է միկը մյուսից 20 մետր հեռավորության վրա յերկու թեթև ձող (6 մետր բարձրությամբ) այն հաշվով, որ նրանց հիմքերը միացնող ուղիղ գիծն ընկնի քամու ուղղության խաչաձև (ուղղահայաց)։ Ձողերի վրա կապում են թոկ, որից կախում են շորի կտորից ծրար զեկուցումով։ Ձողերի առջևում 30 մետրի վրա, քամու ուղղությանը հակառակ կողմից, բաց են անում իջման «T» ազդանշանը, իսկ ձողերի հիմքերը փաթաթում են ճանաչելու քաթաններով յեռանկյունաձև։ Այդ ազդանշանները ծառայում են օդագնացի համար քամու ուղղությունն և տեղը ցույց տալու միջոց, որոնց վրայով նա պետք է թռցնի ինքնաթիռը (տես՝ հավելված 13)։

ԾԱՆՈԹ.—1. Ամեն տեսակ խոչընդոտներից ազատ հրապարակը, որի վրա յեղած արգելքները կարող էին խանգարել ինքնաթիռին ցածր բարձրությամբ թռչել կամ



վտանգավոր. դարձնել այն, և որ նրանցից կարող է կառչել (կպչել) ճանկը պետք է սակայն ընտրել այն հաշվով, որ հակառակորդը գետնից չկարողանա դիտել այն։

2. Ձողերը չպետք է խոր ցցել գետնի մեջ, այլ պետք է ճկուն լինեն և հեշտ յենթարկվեն թեթև հարվածին. թոկը (անպայման կոճղի) ծայրերը կապում են և գցում ձողերի վրա բոլորովին ազատ (վոչ մի դեպքում չամրացնել)։ Ծրարի մեջ վոչ մի ծանրություն տեղավորել չի կարելի։

90. Ինքնաթիռին ճանկի օգնությամբ (ուշադրության գրավում, կապի հաստատում) հաղորդագրություններ ընդունելու համար կանչելը կատարվում է պոստի պետի կողմից սույն հրահանգի §§ 29—30-ի ցուցումների օրինակով։

Ինքնաթիռի հետ կապ հաստատելուց հետո, պոստը բաց է անում «ընդունեցեք հաղորդագրությունը ճանկով» (4567) ազդանշանը։

Յեթե ինքնաթիռը կարող է հաղորդագրություն ընդունել, պատասխանում է «այո» («հասկացա» — 1 սպիտակ հրթիռ) ազդանշանով, որից հետո մոտենում է ծրարը վերցնելու, ցածանալով 15-20 մետր (քամու հակառակ)։

Յեթե ծրարն ընդունված է, պոստը բաց է անում «այո» (1345) ազդանշանը հակառակ դեպքում «կրկնեցեք» (12345)։

Յեթե ինքնաթիռին չի հաջողվի հաղորդագրությունն ընդունելու, այդ դեպքում պոստի գլխի վերևում մի շրջան անելով, բաց է թողնում յերկրորդ անգամ նշանաբանի հրթիռը, որը նշանակում է. «չեմ կարող հաղորդագրությունը ճանկով ընդունել»։

Յեթե այդ դեպքում պոստի պետը հանձնելու

ուրիշ միջոց չունի ինքնաթիռին հաղորդելու գրու-թյունը, այդ դեպքում նա բաց է անում «վերջ» (123 456789) ազդանշանը, որից հետո ինքնաթիռը թըռ-չում, հեռանում է։

ԾԱՆՈԹ.—Ինքնաթիռը ծրարը հաղորդագրությամբ վերցնելու ժամանակ պոստի անձնական կազմը ճանկով վիրավորվելուց խուսափելու համար, պետք է ձողերից մի կողմի վրա կանգնի։

91. Վորպեսզի ինքնաթիռը ճանկի օգնությամբ հաղորդագրությունները ընդունել կարողանա պահան-ջվում է օդաչուական կազմի հատուկ մարզանք. կապի այդ միջոցին պետք է դիմել միայն այդ նպատակի համար լավին պատրաստված անձնական կազմի առկայու-թյան դեպքում (օդագնացներ և օդագնաց-դիտողներ)։





## Ճյուղեր ունեցող ազդանշանի քաթանի նկարագրությունը յեվ գծանկարը

Գծանկարում ցույց տված չափերով ազդանշանի քաթանը—մուգ կապույտ գույնի*) յե նրա վրա սպիտակ գույնի կտորով կարված են T տառը և 9 ճյու-ղեր (հավելվածներ)։



Գծ. 3

Ճյուղերը բացվում և փակվում են ինը մուգ-կապույտ գույնի չեռ ծալովի կափույրների օգնությամբ և քիչ

*) Քաթանը պետք է լինի—նվազ խունացած և դուն-թափված։

ճյուղերի չափերից լայն են: Ազդանշանի քաթանն արագ բաց անելու համար նրա յեզրերով անց են կացնում ամուր թոկ, վորը մերքեր ունի, վորոնցով ազդանշանի քաթանը բացվում է, յեթե պետք է ամրացվում է:

